ՎԵՀԱՐԱՆՈՒՄ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՎԵՀԱՐԱՆԻ ԳԱՀԱՍՐԱՀՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Մեծահարգ նախագահ պրն. Լևոն Տեր-Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հարգելի նախագահ պրն. Բաբկեն Արարքցյան, հարգելի փոխնախագահ պրն. Գագիկ Հարությունյան, սիրելի նախարարներ, պետական ներկայացուցիչներ, հոգևոր եղբայրներ.

Ընտրութենեն ետքը, Իջման Սուրբ Սեղանի առջև կատարած ուխտեն հետո, այնտեղ զգացված սրտով առ Աստված և առ ժողովուրդն ուղղած խոսքերես հետո, այս պահը ես կնկատեմ ամենեն կարևոր պահերեն մեկը այսօրվան դեպքին, երբ Հայոց Հանրապետության Նախագահը իր ավագանիով կուգա շնորհավորել նորընտիր Կաթողիկոսը Ամենայն Հայոց, ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Ես այսօր ոչինչ կրնամ ըսել պատմական այն նշանակությանը մասին, որուն համար ինքը՝ վսեմաշուք Նախագահը, արտահայտվեցավ Ազգային-Եկեղեցական Ժողովի բացման հանդիսավոր նիստին: Բայց հայոց պատմությունը որոշ աստիճանով կարդացած ըլլալով, ինքզինքս այդ պատմության հետ հաղորդ զգալու ապրումով ես այսօր կ'ըսեմ՝ պատմական հարազատ ուղիին շարունակման ճամփուն մեջն ենք մենք, երբ պետություն և Եկեղեցի կողք-կողքի են կանգնում ու կգործեն վասն մեկ ազգի, վասն մեկ հայրենիքի, Աստուծո Սուրբ Կրոնին՝ Ավետարանին քարոզած ճշմարտություններուն հիման վրա և մեր հայ ժողովուրդի առողջ, ազգային գիտակցության և արժանապատվության բարձր ըմբռնումով: Հետևաբար ես կշնորհավորեմ Ձեզ Ձեր այս բարձր ու ազնիվ մտածման համար և իմ բոլոր հոգևոր եղբայրներուս անունով, Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռին անունով Ձեզի կհայտնեմ իմ ջերմագին շնորհակալությունները, որ այսօր դուք օրինակելի և հայոց պատմության վայել արարք մը կատարեցիք, ձեր առաջին այցելությունը տալով նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Կուզեմ Ձեզ վստահացնել, պրն. Նախագահ, որ այս Կաթողիկոսին ալ առաջին այցելությունը ուրիշ տեղ չի կրնար ըլլալ, բայց միայն Ձեզի՝ Հայաստանի մեր անկախ պետության Նախագահին և առհասարակ պետության կառույցին: